



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Անգլերենի ուսուցիչ՝ CEFR-ի C1/C2 մակարդակին համարժեք իմացությամբ

Թափուր աշխատատեղ՝ «Այբ» միջին և ավագ դպրոց

Հասցե՝ [Թբիլիսյան խճ. 11/11](#), Երևան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետ՝ **հունիսի 16, 2019թ.**

Ուսումնական տարվա սկիզբ՝ **սեպտեմբերի 1, 2019թ.**

Մասնագիտական և անձնային պահանջներ

Մեզ կարող են դիմել **այն ուսուցիչները**, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշներին.

- ունեն լեզվաբանության, մանկավարժության (լեզուների դասավանդում), անգլերենի մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում.
- գերազանց տիրապետում են անգլերենի հաղորդակցական հմտություններին (գրավոր և բանավոր).
- ունեն հիմնավոր գիտելիքներ անգլերենից և տիրապետում են այն դասավանդելու գործնական հմտություններին և արդի տեխնոլոգիաներին.
- ունեն ուսումնական հաստատությունում դասավանդելու (մասնավորապես՝ 12-17 տարեկան աշակերտների հետ աշխատելու) ամրագն մեկ տարվա փորձ.
- ուսուցչությունը համարում են իրենց կոչումը, իսկ կրթությունը՝ ոչ միայն անձ ձևավորելու, այլ նաև Հայաստանի ապագան կերտելու գրավական.
- մշտապես կատարելագործում են իրենց մասնագիտական և մանկավարժական կարողությունները՝ հետևելով մասնագիտական և մանկավարժական նորարարություններին ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում.
- մանկավարժական գործունեություն իրականացնելիս ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում, վերլուծական մտածելակերպ և չեն խուսափում նորարարություններից.

- մասնակցում են ներդրողական և դպրոցի նախաձեռնությամբ ստեղծված ցանցային մասնագիտական միջոցառումներին՝ ժամանակին արձագանքելով Էլեկտրոնային հաղորդակցությանը.
- տիրապետում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին (օր.՝ Microsoft Office և այլն).
- կարողանում են ոգևորել երեխային.
- տիրապետում են ժամանակի կառավարման հմտություններին.
- համոզված են, որ իրենց համար երբեք ուշ չէ սովորել:

Դիմելու կարգ

Բոլոր թեկնածուներին խնդրում ենք vacancy@aybschool.am Էլ. հասցեին ուղարկել ստորև ներկայացված բոլոր կյուրերը՝

1. ինքնակենսագրություն (CV),
2. նամակ-հիմնավորում՝ «Ինչու եմ ուզում դառնալ «Այբ»-ում ուսուցիչ» թեմայով (մեկ էջից ոչ ավել),
3. դասավանդման, դասարանի հետ աշխատանքի որևէ մշակում՝ սեփական մոտեցումների ու առաջնահերթությունների **հակիրճ** ներկայացում (նշված ձևաչափերից որևէ մեկով՝ MS Word, Power Point, Adobe PDF, Flash, Video և այլն):

Խնդրում ենք փաստաթղթերը կցել նամակին և նամակի վերնագրում նշել Ձեր անուն-ազգանունը:

Դիտարկվելու են միայն դիմումների ամբողջական փաթեթները՝ ներկայացված անգլերենով:

Մրցույթի հետագա փուլերը ներկայացնելու նպատակով ընտրված թեկնածուների հետ կապ կհաստատենք անձամբ: Խնդրում ենք չզանգահարել:

Կազմակերպության մասին

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: